

ՎԻՇԱՊՆ ԱՂԲՅՈՒՐԻ ԱԿԻՆ

/ մի առասպելածիստական համապարփակ կերպարի մասին /

1. Հայկական ժողովրդական մի հեքիաթում /Հայկական ժողովրդական հեքիաթներ, Եր., 1980, 41 / կա ղրվագ, որտեղ հերոսն ուղևորվում է Սև և Ապիտակ ծովերի միջև գտնվող մի կղզի՝ թագաժրի համար անմահական ջուր ու խնձոր հայթայթելու: Դրանց հսկում է վիշապ, որը 40 օր արթուն է, 40 օր՝ քնած: Ընմահութիւնն պարզևող պարագաները հարավոր է ձեռք բերել, անցնելով քնած վիշապի վրայով՝ պոչից մինչև գլուխը, և վերադառնալով նույն ճանապարհով: Հերոսն այդպես էլ վարվում է, քնդ որում ձեռք բերած պահում է իրեն: Ընմահութիւնը հասնելու այս եղանակը հասկանալուն կապատի մի քանի հեռավոր օրինակների ուսումնասիրությունը:

2. Պոլիսեզական կիսադյուցազն Մաուլին զոհվում է ստորգետնյա /ստորջրյա/ նախամոր՝ Մեծ Հինեյի արգանդը ներթափանցելու փորձն անելիս, երբ նա քնած է լինում, որպեսզի, դուրս գալով նրա բերանից, հասնի անմահութիւնը: Մաուլին պետք է կատարեր իր ճամփորդությունը վիշապակերպ Հինեյի որովայնով, այսինքն՝ ներսից, ի տարբերություն հայկական հեքիաթի հերոսի, որը նույն բանն անում է դրսից: Վերջինս չէր կարողանա իրագործել իր մտահղացումը, եթե վիշապը չլիներ ձգված /չուրոված/ ղիբրում: Վիշապի ձգված լինելը մեզ հուշում է ուրիշ վիշապներ, որոնք արդեն քնակվում են Ավստրալիայում և Հնդկաստանում:

3. Արհեստի ներդրան Յուրիուզգուր վիշապը /Հսկա Պիթոն, համախ նույնացվում է Եփեմանի Օձի հետ/, որն ապրում է սրբազան ջրամբարում, հայտնի է նրանով, որ ղիցաբանական ժամանակներում կուլ է տվել երկու նախամայր-քույրերին: Ներկայումս բնիկների նվիրագործության հիմնական գաղտնածիսությունը հենց այդ առասպելական իրադարձության կրկնությունն է, որի շնորհիվ նվիրագործվողները խորհրդանշական մահից հետո նոր՝ ավելի լիարժեք

կյանք են ձեռք բերում /համտ. նախորդ նրկու ղեպքի անմահությունը/  
նր/։ Պատահական չէ, որ այստեղ նույնպես շեշտվում է քնի թեման՝  
թե՛ կուլ տալուց առաջ և թե՛ դրանից հետո։ Բայց ավելի հատկանշա-  
կան է, որ վիշապը /ղարծյալ թե՛ կուլ տալուց առաջ և թե՛ հետո/  
ձգված է։ Դա առանձնապես լավ է նրևում, նրա ջրհեղեղից հետո /որը  
հենց՝ հենքն էր առաջացրել/, կուլ տված քույրերը որովայնում, վի-  
շապը չորացած ծաղի տեսքով բարձրանում է անշարժ հեղեղի ջրերից։

4. Ավստրալական վիշապի ուղղահայաց ձգվելը հիշեցնել է տա-  
լիս հայկական, ,վիշապ,, քարակոթողները, որոնք նույնպես կապված  
են ջրի հետ և կանգնեցված են եղել ուղղահայաց դիրքով /համտ. նաև  
նրկու վիշապների ֆալիկ բնույթը, մեկը՝ գործառույթյամբ, մյուսը՝  
ձևով/։

5. Ըստ հնդկական առեղծվածային կազմախոսության, ամենաստոր-  
ին շակրայում՝ մարդու ողնաշարի ստորին մասում, քնած է կուև-  
ղալիների օձը, որին ձգտում են արթնացնել և բարձրացնել դեպի ամե-  
նավերին՝ գլխի գագաթին գտնվող շակրան։ Այսինքն՝ հատուկ հոգե-  
կան վիճակի /որը համեմատվում է անմահության հետ/ հասնելու հա-  
մար նույնպես անհրաժեշտ է, որ օձը քնուկնի ձգված դիրքը։

Եթե պոլիեքզական և ավստրալական տարբերակներում մարդը գրտ-  
նրվում է վիշապօձի ներսը, իսկ հայկական օրինակում՝ դուրսը,  
սպա հնդկական ավանդույթը օձին տեղադրում է հենց մարդու խոր-  
քում։

Ե.Ա.ԱՍՏՐՅԱՆ

ԵՊՀ

ՎԱՂ ՄԻՋՆԱԿԱՐՅԱՆ ՔԱՂՈՒՄՆԵՐԻ ՆՈՐԱՀԱՅՑ ՁԵՎԵՐ

1985 թ. Երևանի պետ. համալսարանի հնագիտական հետազոտու-  
թյունների լաբորատորիայի արշավախումբն սկսեց թալիսի մեծ  
դամբարանադաշտի պեղումները։ Պեղվեց շերտազրական տեղամաս  
/10x10 մ/։ 0,50 մ խորությամբ բացվեցին շատ խիտ կառուցված  
դամբարաններ, որոնց թիվը 73 է։ Դրանք դասավորված են երեք  
շերտով, ուղղահայաց հաջորդականությամբ։ Վերին /I / շերտի